

251 Բ

Թիւ 24484
Փետրուար 28, 1975

Մեծայարդ

Տիար Փօլ Զոպանեան

Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ

ծխական Խորհուրդի Ատենապետ
Ռէյսին.

Յարգելի Տիար Փ. Զոպանեան,

Սաացած ենք Փետրուար 15, 1975 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով
կը հաղորդէք թէ Ցունուար 26ին գումարուած համայնքի ծխական ժողո-
վին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտրութիւնը,
եւ Ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած ան-
ձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Եկեղեցւոյդ ծխական ժողովը տեղի ունեցած է
Թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերաց-
նենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ արուած ցան-
կին:

Այս առթիւ կը վափաբինք Ձեր ուշադրութեան յանձնել Թեմական Կանո-
նադրութեան թիւ 28 յօդուածը, ուր կ'ըստւի. - ծխական Խորհուրդի ան-
դամները կը շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ իրենց յաջորդներուն
Առաջնորդին կողմէ հաստատումը եւ պաշտօնի անցնիլը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ
արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ
եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Փօլ Զոպանեան

Փօլ Թեւակեան

Էտուըս Գաբրիէլեան

Մանուկ Ճանսուզեան